ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «28» հունիսի 2017 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 34-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ *ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԸ* ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշման հավելված 1-ի 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. Կազմակերպել Ակադեմիական և գիտական շարժունության միջազգային մրցույթը:
2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելվածի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի 2017 թ.
հունիսի 28-ի թիվ 34- Ա հրամանի

ՀՐԱՎԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ *ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ*

- **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Սույն փաստաթուղթը սահմանում է Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության (ՖՀԳ) և ՀՀ կրթության և գիտության նախարարության (ԿԳՆ) գիտության պետական կոմիտեի (ԳՊԿ) կողմից համատեղ իրականացվող գիտահետազոտական և համալսարանական ծրագրերի շրջանակում հայտարարված մրցույթի հայտերի ներկայացման կարգն ու պայմանները:

Ուշադրություն.
Մրցույթին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ինչպես ՖՀԳ, այնպես էլ ԳՊԿ:

Մրցույթին մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝

20 հոկտեմբերի 2017 թվական, ժամը 17^{00}

- **ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇՐՋԱՆԱԿԸ**

Ֆրանկոֆոնիայի եվրոպական ցանցի ստեղծումը համարելով որպես Հայաստանի՝ գիտահետազոտական և բարձրագույն կրթության եվրոպական տարածք ինտեգրման գործընթացին նպաստող խթան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալությունը 2016 թվականի հուլիսի 20-ին ստորագրեցին <<Համատեղ գիտահետազոտական և համալսարանական ծրագրերի իրականացման մասին>> փոխըմբռնման հուշագիրը:

Հուշագրի նպատակն է՝ զարգացնել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում և Հայաստանի Հանրապետությունում գործող գիտահետազոտական լաբորատորիաների միջև համագործակցային կապերը՝ նպաստելով երիտասարդ հետազոտողների շարժունությանը, ինչպես նաև գիտության և տեխնիկայի զարգացման ոլորտում նոր համագործակցային ծրագրերի իրականացմանը:

Հուշագրի իրականացման հայաստանյան պատասխանատու մարմինը ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն է:

3. ԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

Սույն մրցույթին հայտեր կարող են ներկայացվել հետևյալ ոլորտներով՝ համաձայն Հավելված 4-ում զետեղված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների և մասնագիտական դասիչների.

Ֆիզիկա և աստղագիտություն
Կյանքի մասին գիտություններ
Երկրի մասին գիտություններ
Հումանիտար և հասարակական գիտություններ
Հնագիտություն և հնէաբանություն
Քաղաքաշինություն

4.ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Սույն Մրցույթին մասնակից կարող է լինել ֆրանկոֆոն կամ մասամբ ֆրանկոֆոն հայ երիտասարդ հետազոտողը, ով ՀՀ պետական որևիցե բուհում կամ գիտական կազմակերպությունում իրականացնում է գիտական կամ ակադեմիական գործունեություն սույն Հրավերի 3-րդ կետում նշված գիտական ոլորտներից մեկում և ում տարիքը չի գերազանցում 40-ը՝ մինչև հայտերի ընդունման վերջնաժամկետը: Մրցույթը բաց է Հայաստանում գործող ոչ պետական ուսումնական հաստատությունների համար: Սակայն, ԳՊԿ կողմից ֆինանսավորման են ենթակա միայն պետական բուհեր և գիտական կազմակերպություններ ներկայացնող հայտատուները:
- Մասնակցության համար մասնակիցը ներկայացնում է շարժունության ծրագիր, որն առաջնահերթորեն իրականացվելու է հետևյալ երկրներում տեղակայված ՖՀԳ անդամ որևէ հաստատության լաբորատորիայում՝ *Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Բելառուս, Չեխիա, Էստոնիա, Վրաստան, Հունաստան, Խորվաթիա, Հունգարիա, Ղրղզստան, Ղազախստան, Լիտվա, Լատվիա, Մոլդովա, Մոնտենեգրո, Մակեդոնիա, Լեհաստան, Ռումինիա, Սերբիա, Ռուսաստան, Սլովենիա, Սլովակիա, Տաջիկստան, Թուրքիա, Թուրքմենստան, Ուկրաինա, Ուզբեկստան* (տես՝ https://www.auf.org/les_membres/nos-membres/)

1.Մասնակցության հայտը պետք է պարունակի սույն Հրավերի 12-րդ կետում թվարկված բոլոր փաստաթղթերը:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել սահմանված ժամկետներում՝ ըստ ԳՊԿ և ՖՀԳ կողմից սահմանված ընթացակարգերի:

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԳՊԿ և ՖՀԳ կողմից տրամադրված միջոցները կարող են օգտագործվել հետևյալ նպատակների համար՝

- տրանսպորտային ծախսեր (Հայաստանից դեպի հյուրընկալող բուհ և վերադարձ Հայաստան),

🗁✍ առողջության ապահովագրման և մուտքի արտոնագրի համար ծախսեր,

🗎✍ամրագրված ամսական նպաստ (տե՛ս Հավելված 1):

Ծրագրի իրականացման հետ կապված ցանկացած այլ ծախս պետք է կատարվի գործընկեր լաբորատորիաների միջոցների կամ այլ աղբյուրների հաշվին:

6. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագրի տևողությունը 1-ից (մեկ) առավելագույնը 6 (վեց) ամիս է:

Ֆինանսավորման երաշխավորված ծրագրերը պետք է իրականացվեն ***2017 թվականի դեկտեմբերից – 2018 թվականի դեկտեմբեր*** ընկած ժամանակահատվածում:

7. ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Մրցույթին ներկայացված հայտերը ենթարկվում են տեխնիկական ստուգման ԳՊԿ-ի և ՖՀԳ-ի կողմից:

Հայտերի գնահատման հետագա ընթացքը կիրականացվի՝ համաձայն ԳՊԿ և ՖՀԳ ընդունված առանձին ընթացակարգերի:

Ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի թիվը կորոշվի ԳՊԿ և ՖՀԳ ներկայացուցիչներից կազմված համատեղ հանձնաժողովի կողմից՝ անցկացված փորձաքննության արդյունքների հիման վրա՝ ելնելով կողմերի ֆինանսական հնարավորություններից:

Համատեղ հանձնաժողովը կհաստատի նաև յուրաքանչյուր ծրագրի համար հատկացված ֆինանսավորման ծավալները:

Ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի ցանկը կհրապարակվի առցանց՝ http://scs.am/ և https://www.auf.org/europe-centrale-orientale/ կայքէջերում:

Մրցույթի արդյունքների բողոքարկման փուլ նախատեսված չէ:

8. ԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Մրցույթին ներկայացված հայտերի գնահատման համար ԳՊԿ-ի և ՖՀԳ-ի կողմից սահմանվել են հետևյալ չափանիշները՝

Գնահատման չափանիշ	**Միավոր** **(յուրաքանչյուր հարցին տրվող առավելագույն միավորը 25-ն է)**
➢**Մասնակցի ակադեմիական առաջադիմությունը** *կրթություն, դիպլոմներ, հրապարակումներ*	25

➢**Գիտահետազոտական աշխատանքի գիտական արժեքը** *բովանդակություն, իրականացման պլան,մեթոդաբանություն, ղեկավարների գնահատականներ, ընտրված լաբորատորիայի համարժեքությունը ծրագրի նպատակներին*	25
➢**Արդյունքները և ակնկալվող դրական ազդեցությունը** *ակնկալվող արդյունքներ, հստակ սահմանված օգուտներ, այլ խմբերին փոխանցվելիք արդյունքներ, ծրագրի դրական ազդեցության շրջանակները*	25
➢**Եվրոպական հետազոտական տարածքում ներգրավվածությունը և համագործակցության զարգացման հեռանկարները** *Բուհի կամ գիտահետազոտական կազմակերպության՝ Եվրոպական հետազոտական տարածք ներգրավվածության մակարդակի բարձրացմանն ուղղված գործունեություն, նախագծի կապն այլ գիտական և շարժունության ծրագրերի հետ, հետագա համագործակցության հեռանկարներ*	25
ԸՆԴԱՄԵՆԸ	**100**

Ֆինանսավորման են ենթակա միայն 75 և ավելի միավոր ստացած հայտերը:

Ըստ ԿԳՆ և ՖՀԳ միջև կնքված Փոխըմբռնման հուշագրի՝ առաջնահերթությունը կտրվի այն նախագծերին, որոնք միտված են նպաստելու հայաստանյան տվյալ բուհի կամ գիտական կազմակերպության ներգրավվածությանը Եվրոպական հետազոտական տարածքում և համագործակցելու այլ գիտահետազոտական և շարժունության ծրագրերի հետ:

9. ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՔԸ

Ֆինանսավորման երաշխավորված ծրագրերը կիրականացվեն համաձայն՝
- ԳՊԿ և շահառուի բուհի միջև կնքված պայմանագրի
- ՖՀԳ և շահառուի բուհի միջև կնքված պայմանագրի

Շահառուն պարտավորվում է ծրագրի ավարտից հետո **1 (մեկ)** ամսվա ընթացքում ԳՊԿ և ՖՀԳ ներկայացնել գիտական և ֆինանսական հաշվետվություն՝ ըստ կողմերի սահմանված ձևաչափի:

10. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

28/06/2017	**Մրցույթի հայտարարության հրապարակում**
20/10/2017	**Հայտերի ներկայացման վերջնաժամկետ**
15/11/2017	**Հայտերի գնահատում և արդյունքների ամփոփում**
30/11/2017	**Պայմանագրերի ստորագրում**
1/12/2017	**Ֆինանսավորման սկիզբ**

01/12 /2017–30/12/2018	**Ծրագրերի իրականացում**

11. ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ուշադրություն. Հայտը պետք է ներկայացնել ԱՌՑԱՆՑ ԵՎ ԹՂԹԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ:

Առցանց հայտը ներկայացվում է հետևյալ հղումով՝ https://formulaires.auf.org/ (անհրաժեշտ է գրանցվել):

Հայտի թղթային տարբերակն անհրաժեշտ է ներկայացնել հայտատուի դիմումով (**Հավելված 3**) հետևյալ հասցեով՝

0028, ք. Երևան, Օրբելի եղբայրների 22
Հեռախոս՝ 210 140 /115/, ֆաքս՝ 210 140 /104/
Էլ. փոստ՝ info@scs.am

Հիշեցում. առցանց և թղթային տարբերակով հայտերի ներկայացման վերջնաժամկետն է՝ **20/10/2017**, Երևանի ժամանակով 17^{00}:

12. ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Ամբողջական հայտը բաղկացած է հետևյալ փաստաթղթերից.

- Տիտղոսաթերթ (*Ձև 1*)
- Գիտահետազոտական նախագծի անոտացիա, ծրագրի ընդլայնված նկարագրություն (*3-5* էջ, Sylfaen *10*, միջտողային հեռավորություն *1.5*, գրականության ցանկ) (*Ձև 2, 2.1*)
- Հայտատուի մասին տվյալներ (*Ձև 3*)
- Ծախսերի նախահաշիվ(*Ձև 4*)
- Վերջին դիպլոմի պատճեն
- 2017 թ. դրությամբ մասնակցի կարգավիճակը հաստատող փաստաթուղթ աշխատավայրից
- մասնակցի բուհի/գիտական կազմակերպության վարչական պատասխանատուի կողմից տրված համաձայնություն
- հյուրընկալող բուհի/կազմակերպության վարչական պատասխանատուի կողմից տրված համաձայնություն
- հյուրընկալող բուհի գիտական պատասխանատուի ստորագրությամբ համաձայնություն

Երկու բուհերից պահանջվող փաստաթղթերը պետք է հիմնավորեն դիմորդի գիտական հետաքրքրությունը, բուհի/կազմակերպության համար ակնկալվող ազդեցությունը, հետագա համագործակցության հեռանկարները:

Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն ՀԱՅԵՐԵՆ:

Փաստաթղթերից որևէ մեկի բացակայությունը ինքնըստինքյան հայտի մերժման հիմք կհանդիսանա:

ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ	
Գիտության պետական կոմիտե	**Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալություն Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջան**
http://scs.am/ 0028, ք. Երևան, Օրբելի եղբայրների 22 Հեռ.՝ 21 01 40 +115 Էլ.փոստ. info@scs.am	https://www.auf.org/europe-centrale-orientale/ 0002, ք. Երևան, Թումանյան 42 Էլ.փոստ. mobilites-armenie@auf.org

ԱՄՍԱԿԱՆ ՆՊԱՍՏԸ	
Գիտական շարժունություն, վերապատրաստման շարժունություն, գիտական ստաժավորում	**Գիտական,վերապատրաստման շարժունություն (դասախոս և/կամ հետազոտող)**
Հյուրընկալող երկրներ	Ամսական նպաստի չափը (հազ.դրամ)
Բելգիա, Կանադա, Շվեյցարիա, Կիպրոս, Իսպանիա, Ֆրանսիա, Հունաստան, Խորվաթիա, Հունգարիա, Իսրայել, Իտալիա, Ճապոնիա, Լյուքսեմբուրգ, Լեհաստան, Պորտուգալիա, Չեխիա, Սլովակիա, Սլովենիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ	527.8
Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Բելառուս, Չինաստան, Վրաստան, Հնդկաստան, Թուրքիա, Իրաք, Իրան, Հորդանան, Ղազախստան, Լիբանան, Լիտվա, Լատվիա, Մոլդովա, Մակեդոնիա, Մոնտենեգրո, Ռումինիա, Սերբիա, Ռուսաստան, Ուկրաինա	376.3

Ձև 1

ԳՊԿ ԵՎ ՖՀԳ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՏԵՂ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

ՀԱՅՏ

Հայտը հանձնված է «_____» _____ 2017 թ. Ծածկագիր՝
(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

- Հայտի
  - վերնագիրը (15 բառից ոչ ավելի՝ հայերենով, անգլերենով և ռուսերենով)

    _____

    _____
  - բնագավառը և մասնագիտական դասիչը _____

    (ըստ Հավելված 4-ի)
    - բնույթը (հիմնարար/փորձարարական)
- Հուշող (բանալի) բառեր (հայերեն, ռուսերեն և անգլերեն)

  _____
- Հայտատուի
  - ազգանունը, անունը, հայրանունը _____
  - ծննդյան թիվը _____
  - պաշտոնը _____
  - հեռախոսը _____
  - էլեկտրոնային հասցեն _____
- Կազմակերպության լրիվ, կրճատ անվանումները,կազմակերպաիրավական ձևը և գերատեսչական պատկանելությունը_____
- Կազմակերպության հասցեն, հեռախոսը, ֆաքսը և էլեկտրոնային հասցեն

  _____
- Նախագծի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____ ամիս
- Հայցվող ընդհանուր գումարը _____ հազար դրամ

- Հայտատուի ստորագրությունը _____
- Կազմակերպության գիտական քարտուղարի (կամ ղեկավարի) ստորագրությունը

  _____

  «____» _____ 2017 թ.

Կ.Տ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ՝

Ձև 2

* *Համառոտ պարբերությամբ հայերենով և անգլերենով ներկայացնել նախագծի նպատակները:*

Ձև 2.1

Ձև 3

---

* *1. ներկայացնել խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, նախագծի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները, միջազգային համագործակցության հեռանկարները (մինչև 4 էջ)*

2. նշել տվյալ ուղղությամբ ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները (մինչև 1 էջ)

3. օգտագործված գրականության ցանկը:

ՀԱՅՏԱՏՈՒԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Ազգանուն, անուն, հայրանուն _____
(հայերեն, անգլերեն և ռուսերեն)
2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը _____
3. Բարձրագույն կրթություն_____
4. Որակավորում_____
5. Գիտական աստիճան _____
6. Վերջին թեզի ծածկագիր, պաշտպանության տարեթիվ և վայր

_____

7. Հրատարակված

- գիտական հոդվածներ (թիվը) _____
- մենագրություններ (թիվը) _____

8. Արտոնագրեր (թիվը) _____
9. Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները

(նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը)

1) _____
2) _____
(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

10. Նշել ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ից և այլ աղբյուրներից ստացված դրամաշնորհները

1) _____
2) _____
(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

«____» _____ 2017 թ. _____
(ղեկավարի ստորագրությունը)

Ձև 4

ՀԱՅՏԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայտի ծածկագիրը _____

(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

	Հոդվածի անվանումը	**Պահանջվող միջոցները (հազ. դրամ)**
1	Ճանապարհածախս	
2	Կեցության ծախսեր	
3	Այլ (ապահովագրություն, մուտքի արտոնագիր)	
	Ընդամենը	

Հայտատու՝ _____ _____

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ _____

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Հավելված N 3
ԳՊԿ և ՖՀԳ համատեղ անցկացվող ակադեմիական
և գիտական շարժունության մրցույթի հրավերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել կից ներկայացվող հայտը՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության կողմից անցկացվող ***Ակադեմիական և գիտական շարժունության միջազգային մրցույթին*** մասնակցելու համար:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

«____» _____ 2017 թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.3. Ֆիզիկա և աստղագիտություն

1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ

1.6. Կենսաբանական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Հոգեբանություն

5.2. Տնտեսագիտություն և գործարարություն

5.3. Մանկավարժական գիտություններ

5.4. Սոցիոլոգիա

5.5. Իրավունք

5.6. Քաղաքական գիտություններ

5.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն

5.8. Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն

5.9. Այլ հասարակական գիտություններ

6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Պատմություն, հնագիտություն

6.2. Լեզվագիտություն, գրականագիտություն

6.3. Փիլիսոփայություն, էթիկա

6.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն

6.5. Արվեստագիտություն

6.6. Այլ հումանիտար գիտություններ